ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

« 28 » սեպտեմբեր 2023թ. No 4638 - Ա

«ՄԵ-ԳԱ ՊԼՅՈՒՍ» ՀԵՂՈՒԿԻ ՏԵՍՔՈՎ ԱԽՏԱՀԱՆԻՉ ՄԻՋՈՑԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՀՐԱՀԱՆԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 728-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրության 18-րդ կետի 20-րդ ենթակետը և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2015 թվականի սեպտեմբերի 10-ի թիվ 48-Ն հրամանի հավելվածի 19-րդ կետը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել՝ «ՄԵ-ԳԱ ՊԼՅՈՒՍ» հեղուկի տեսքով ախտահանիչ միջոցի կիրառման հրահանգը՝ համաձայն հավելվածի:
2. Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լիլիթ Բաբախանյանին՝ հրամանը տեղադրել Առողջապահության նախարարության պաշտոնական կայքում:
3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Ա. ԱՎԱՆԵՍՅԱՆ

«Հավելված
ՀՀ Առողջապահության նախարարի
2023 թվականի սեպտեմբեր « 28 » - ի N 4638 - Ա հրամանի

# ՀՐԱՀԱՆԳ

# «ՄԵ-ԳԱ ՊԼՅՈՒՍ» ՀԵՂՈՒԿԻ ՏԵՍՔՈՎ ԱԽՏԱՀԱՆԻՉ ՄԻՋՈՑԻ ԿԻՐԱՌՄԱՆ

## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «ՄԵ-ԳԱ ՊԼՅՈՒՍ» հեղուկի տեսքով ախտահանիչ միջոցը (այսուհետ՝ միջոց) իրենից ներկայացնում է սպիրտի հոտով թափանցիկ հեղուկ: Որպես ազդող նյութեր՝ միջոցը պարունակում է էթիլ սպիրտ՝ 56,0±0,2%, պրոպիլ սպիրտ՝ 21%, քլորհեքսիդինի բիգլյուկոնատ, ինչպես նաև ֆունկցիոնալ հավելումներ, այդ թվում մաշկը խնամող բաղադրիչներ, ջուր, միջոցի pH-ը՝ 5-8 միավոր, միջոցի խտությունը՝ 0,80-1 գ/սմ:

2. Միջոցի պիտանելիության ժամկետը 5 տարի է թողարկման ամսաթվից՝ արտադրողի սերտ փակ փաթեթով չոր տեղում, +5$^0$C-ից մինչև +30$^0$C ջերմաստիճանում պահելու դեպքում:

3. Միջոցը փաթեթավորված է 0,05լ-ից մինչև 1լ տարողությամբ պոլիմերային տարայում:

4. Միջոցն օժտված է հակամանրէային ակտիվությամբ գրամբացասական և գրամդրական մանրէների (ներառյալ տուբերկուլոզի միկոբակտերիաները՝ թեստավորված Mycobacterium terrae-ի վրա, ներհիվանդանոցային վարակների հարուցիչները՝ թեստավորված Pseudomonas aeruginosa-ի վրա, այդ թվում աղիքային ցուպիկի, ստաֆիլակոկերի, սալմոնելլաների խմբի մանրէները), լեգիոնելոզի, հատուկ վտանգավոր վարակների հարուցիչների (ժանտախտ, խոլերա, տուլարեմիա) նկատմամբ, վիրուսների նկատմամբ՝ այդ թվում ռինովիրուսների, նորովիրուսների, ռոտավիրուսների, ադենովիրուսների, ընդերային և արտաընդերային հեպատիտների՝ ներառյալ հեպատիտ Ա-ի Բ-ի, Ց-ի, Դ-ի, պոլիոմիելիտի վիրուսների, Կոքսակի էնտերովիրուսների, ECHO, ՄԻԱՎ վիրուսների, գրիպի վիրուսի, այդ թվում՝ «խոզի» H1N1 և «թռչնի» H5N1, պարագրիպի, կորոնավիրուսի, «ատիպիկ թոքաբորբի» հարուցչի (SARS, MERS), հերպեսի, կարմրուկի, սուր շնչառական վիրուսային վարակների, ցիտոմեգալովիրուսային վարակի և սնկասպան ակտիվությամբ՝ Կանդիդա և Տրիխոֆիտոն ցեղի սնկերի նկատմամբ:

5. Միջոցն օժտված է երկարաձգված հակամանրէային ազդեցությամբ 3 ժամվա ընթացքում: Միջոցով մշակումից հետո լվացում չի պահանջվում:

6. Միջոցը, ըստ սուր թունավորության չափանիշների, համաձայն ԳOUS 12.1.007-76–ի, ստամոքսի մեջ և մաշկի վրա լցվելիս պատկանում է քիչ վտանգավոր նյութերի 4-րդ դասին: Որովայն ներմուծման ժամանակ պատկանում է քիչ թունավոր նյութերի 4-րդ դասին՝ ըստ Կ. Կ. Սիդորովի դասակարգման: Տեղային գրգռիչ, մաշկային-ռեզորբտիվ և գերզգայունացնող հատկությունները կիրառման առաջարկվող ռեժիմներով միջոցի մոտ արտահայտված չեն: Կուտակային արդյունքը (կումուլյատիվ էֆեկտ) բացակայում է: Միջոցն օժտված է չափավոր գրգռիչ ազդեցությամբ աչքի լորձաթաղանթի վրա: Ըստ ներշնչական (ինհալյացիոն) վտանգավորության աստիճանի՝ կիրառման առաջարկվող ռեժիմներով, միջոցը պատկանում է քիչ վտանգավոր նյութերի 4-րդ դասին:

7. Սահմանային թույլատրելի խտությունը (ՍԹԽ) աշխատանքային գոտու օդում էթիլ սպիրտի համար 1000 մգ/մ$^3$ է (գոլորշիներ, վտանգավորության 4-րդ դաս):

8. Միջոցը կիրառվում է. առողջապահական հաստատություններում, ներառյալ՝ բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունները (այսուհետ բժշկական կազմակերպություն), այդ թվում՝ ամբուլատոր-պոլիկլինիկական և ստացիոնար բժշկական կազմակերպությունները, առողջարանները, վերականգնողական կենտրոնները, բժշկական բազմապրոֆիլ կենտրոնները, բուժսանմասերը և բուժկետերը, բուժակ և բուժակ-մանկաբարձական կետերը, ծննդաբերական ստացիոնարները, նորածնային բաժանմունքները, նեոնատալ կենտրոնները և բաժանմունքները, մանկական բաժանմունքները, ատամնաբուժական կլինիկաները և բաժանմունքները, էնդոսկոպիական և կոլոնոսկոպիական բաժանմունքները, տարբեր հիմնարկների բժշկական կաբինետները և բուժկետերը, ախտորոշման կաբինետները, ինտենսիվ թերապիայի և վերակենդանացման, վնասվածքաբանության բաժանմունքները, այրվածքաբանական կենտրոնները, օրգանների փոխպատվաստման կենտրոնները, արյան փոխներարկման և վերցման կայանները, հակատուբերկուլոզային (կամ ֆթիզիատրիական) հաստատությունները, մաշկա-վեներաբանական դիսպանսերները, սնկաբանական և այլ, բոլոր տեսակի սանիտարական տրանսպորտում, այդ թվում շտապօգնության մեքենայով տեղափոխման պայմաններում, ախտահանման ուղղվածության հիմնարկներում, ներառյալ՝ սանթողարանները, լաբորատորիաներում (այդ թվում՝ մանրէաբանական, վիրուսաբանական, սնկաբանական, իմունաբանական, կլինիկական, ախտորոշիչ և

այլն), դեղատներում և դեղատնային հիմնարկներում, արտակարգ իրավիճակների և տարերային աղետների գոտում, վարակի օջախներում, կազմակերպություններում և գերատեսչություններում՝ Ներքին գործերի նախարարության (ՆԳՆ) Ոստիկանության և Փրկարար ծառայության, Քաղաքաշտպանության զորքերի (ՔՊ) և կազմավորումների անձնակազմի, ջրամատակարարման և էներգոցանցի օբյեկտներում, ռազմական գերատեսչություններում, քրեակատարողական հիմնարկներում և այլն, օծանելիքա-կոսմետիկական, քիմիա-դեղագործական, կենսատեխնոլոգիական և միկրոկենսաբանական արդյունաբերության հիմնարկներում, անասնաբուժական օբյեկտներում, թռչնաբուծական, կենդանաբուծական, գազանաբուծական տնտեսություններում, սննդի արդյունաբերության կազմակերպություններում (մսի, կաթի, թռչնավերամշակման, հացաթխման, հրուշակային և այլն), հանրային սննդի, արդյունաբերական շուկաների, առևտրի կազմակերպություններում, մանկական նախադպրոցական և դպրոցական հաստատություններում, ադմինիստրատիվ օբյեկտներում, սոցիալական ապահովության ծառայություններում (տարեցների, հաշմանդամների տուն, հոսպիս և այլն), կրթության, մշակույթի, հանգստի, սպորտի հաստատություններում և կազմակերպություններում, առողջարանակուրորտային հաստատություններում, տրանսպորտի բոլոր տեսակներում, ներառյալ սննդի և պարենային հումքի տեղափոխման տրանսպորտը, սպասարկման ոլորտի օբյեկտներում (ներառյալ հյուրանոցները, հանրակացարանները, հանրային զուգարանները, գեղեցկության սրահները, վարսավիրական և կոսմետոլոգիական սրահները, սոլյարիները, բաղնիքները, շոգեբաղնիքները և այլ առողջարարական ժամանցային համալիրները), առևտրային-զվարճանքի կենտրոններում, արդյունաբերական շուկաներում, մանրածախ առևտրի կազմակերպություններում, ծիսական ծառայությունների օբյեկտներում, դիահերձարաններում և այլն:

9. Միջոցը նախատեսված է հետևյալի համար.

1) Ձեռքերի հիգիենիկ մշակման համար՝ բժշկական կազմակերպությունների բուժանձնակազմի, սանիտարական տրանսպորտում, շտապ և անհետաձգելի բժշկական օգնության կայանների, լաբորատորիաների (այդ թվում մանրէաբանական, սնկաբանական, վիրուսաբանական, իմունաբանական, կլինիկական, քրեագիտական և այլ) աշխատակիցների, դոնորական կետերի, արյան փոխներարկման կետերի, բժշկասանիտարական մասերի աշխատակիցների, դեղատների և դեղատնային կազմակերպությունների աշխատակիցների, օծանելիքա-կոսմետիկական,

դեղագործական, կենսատեխնոլոգիական և միկրոկենսաբանական արդյունաբերության հիմնարկների աշխատակիցների, արտակարգ իրավիճակների գոտիներում, քրեակատարողական հիմնարկներում, սպասարկման ոլորտի օբյեկտներում (ներառյալ գեղեցկության սրահները, վարսավիրական և կոսմետոլոգիական սրահները, ՍՊԱ-սրահները, բաղնիք-լվացքատնային համալիրները, հյուրանոցային տնտեսության օբյեկտները և այլն), ծիսական ծառայությունների օբյեկտների, դիահերձարանների, հանրային տրանսպորտի օբյեկտների, հանրային սննդի, կաթնախոհանոցի, շուկաների օբյեկտներում, սննդի և թռչնաբուծական, կենդանաբուծական, խոզաբուծական և գազանաբուծական տնտեսությունների վերամշակման արդյունաբերության հիմնարկներում, առևտրական կազմակերպություններում (այդ թվում գանձապահների և արժեթղթերով աշխատող այլ անձանց) աշխատակիցների ձեռքերի հիգիենիկ մշակման համար,

2) Բժշկական կազմակերպություններում վիրաբույժների և վիրահատական միջամտություններին մասնակցող այլ անձանց ձեռքերի մշակման համար (այդ թվում ատամնաբուժական կազմակերպություններում, ինչպես նաև ծննդատներում՝ ծնունդ ընդունելիս և այլն),

3) Պացիենտների ներարկային դաշտի մշակման համար, այդ թվում պատվաստումների ժամանակ,

4) Բժշկական կազմակերպությունում, արյան փոխներարկման և վերցման կայաններում դոնորների արմնկային ծալքի մշակման համար,

5) Վիրահատական դաշտի մշակման համար, այդ թվում հոդերի և օրգանների կաթետերավորման և պունկցիայի ժամանակ (այդ թվում բուժական և ախտորոշիչ պունկցիաների, ծայրամասային և կենտրոնական անոթների կաթետերավորման, ողնուղեղային պունկցիաների, էպիդուրալ տարածության կաթետերավորման, հոդերի պունկցիայի), ծակում, հատում, բիոպսիա իրականացնելիս բժշկական կազմակերպություններում, տարբեր հաստատությունների, սոցիալական ապահովության հաստատությունների (տարեցների, հաշմանդամների տուն և այլն) բժշկական կաբինետներում, առողջարանա-կուրորտային հաստատություններում, քրեակատարողական և այլ հիմնարկներում, ինչպես նաև շտապօգնության մեքենաներով տեղափոխման պայմաններում և արտակարգ իրավիճակների ժամանակ,

6) Մաշկի մասնակի սանիտարական մշակման համար, ներառյալ պառկած (անկողնային) հիվանդների,

7) Ոտնաթաթերի մշակման համար՝ բաղնիք, ցնցուղարան, շոգեբաղնիք, լողավազան հաճախելուց հետո սնկային հիվանդությունների կանխարգելման նպատակով, արտակարգ իրավիճակների կանխման և չեզոքացման ուժային գերատեսչությունների ներկայացուցիչների, ՆԳՆ փրկարարների, քաղպաշտպանության զորքի և ձևավորումների անձնակազմի, քրեակատարողական հիմնարկներում գտնվողների, մեծահասակ անձանց ոտնաթաթերի կանխարգելիչ մշակման համար,

8) Բուժանձնակազմի ձեռքերին հագած ձեռնոցների (քլորոպրենային կաուչուկից, լատեքսից, նեոպրենից, նիտրիլից և քիմիական նյութերի նկատմամբ կայուն այլ նյութերից) ախտահանման համար, այդ թվում ձեռնոցի վրա վարակիչ նյութ լցվելու դեպքում, բժշկական թափոնների հավաքման ժամանակ, ինչպես նաև մանրէազերծ արտադրանք թողարկող հիմնարկների աշխատակիցների,

9) Որպես ախտահանիչ միջոց՝ օգտագործվում է.

ա. սպիրտների ազդեցության նկատմամբ կայուն մակերեսների արագ ախտահանում և չորացում պահանջող պայմաններում կիրառման համար՝ տարբեր ուղղվածության բժշկական կազմակերպություններում, այդ թվում՝ ատամնաբուժական կաբինետներում, ընդունարանային բաժանմունքներում, վերակենդանացման, վիրահատական, ակնաբուժական, մանկական ստացիոնարներում, ծննդատներում և մանկաբարձական կլինիկաներում (ներառյալ նեոնատոլոգիական բաժանմունքները, նորածնային սենյակները, արտամարմնային բեղմնավորման բաժանմունքները), վիրակապարաններում, ամբուլատոր ընդունելության զննման սենյակում, արյան փոխներարկման կայաններում, վարակի օջախներում, մեկուսարաններում, բոքսերում, ախտորոշիչ, կլինիկական, մանրէաբանական և այլ լաբորատորիաներում, շտապօգնության, ՔՊ, ՆԳՆ ծառայությունների մեքենաներում, սանիտարական տրանսպորտում, մանկական նախադպրոցական, դպրոցական հաստատություններում, քրեակատարողական հիմնարկներում, քիմիա-դեղագործական, կենսատեխնոլոգիական արդյունաբերության, հանրային սննդի և առևտրի հաստատություններում, սննդի և վերամշակման արդյունաբերության հիմնարկներում, անասնաբուժական կազմակերպություններում, սպասարկման ոլորտի օբյեկտներում (վարսավիրանոց, մերսման և կոսմետիկական սրահներ,

գեղեցկության սրահ, ՍՊԱ-սրահ, հյուրանոց, հանրակացարան, սոցիալական ծառայություն մատուցող հաստատություններ, լվացքատուն, դիահերձարան և այլն), մարզա-առողջարարական նշանակության օբյեկտներում (լողավազան, բաղնիք, շոգեբաղնիք և այլն) արագ ախտահանման նպատակով,

բ. ոչ մեծ մակերեսով մակերևույթների, ինչպես նաև սենքերում դժվարհասանելի մակերեսների (հատակ, պատեր և այլն) ախտահանման համար,

գ. կահավորանքի պարագաների (այդ թվում վիրահատական, մանրէասպան լամպերի և այլ լուսավորող սարքերի), կոշտ և փափուկ գույքի (այդ թվում վիրահատական, միջամտությունների, բարուրելու, ծննդաբերական, գործողությունների, հերձասեղանների, գինեկոլոգիական և ատամնաբուժական բազկաթոռների, վերակենդանացման ներքնակների, բաժանմունքներում պատյանով ներքնակների և այլն), պատգարակների և սայլակների, գլխադիրների և արմնկակալների, բռնակների, դռների և պատուհանների բռնակների, օդափոխիչների ճաղավանդակների և այլն, սանիտարա-տեխնիկական սարքավորման, մարզագույքի, անհատական հիգիենայի միջոցների ախտահանման համար,

դ. այն սարքերի և սարքավորումների մակերեսների, այդ թվում բժշկական սարքավորումների կառավարման վահանակների, թոքերի արհեստական շնչառության սարքերի (ИВЛ), անեսթեզիայի և հեմոդիալիզի սարքերի արտաքին մակերեսների, էնդոսկոպիական սարքերի չհանվող մասերի և հանգույցների, բժշկական ջերմաչափերի, օպտիկական սարքերի արտաքին մակերեսների ախտահանման համար, որոնք արտադրողի կողմից թույլատրվում են մշակել սպիրտ պարունակող միջոցներով,

ե. վարակիչ հիվանդությունների օջախներում, այդ թվում ժանտախտի, խոլերայի, տուլարեմիայի, կորոնավիրուսի, սենքերում ոչ մեծ մակերեսների՝ կոշտ գույքի, սարքերի և սարքավորումների, ախտահանման համար,

զ. ախտորոշիչ սարքավորումների (ՈՒԶՀ և այլ) և այլ համանման բժշկական արտադրատեսակների մակերեսային (մաշկին դրվող) տվիչների ախտահանման համար, որոնք թույլ են տալիս շփման եղանակով ախտահանում,

է. կլինիկական, մանրէաբանական, վիրուսաբանական և այլ լաբորատորիաներում լաբորատոր գույքի և սարքավորումների մակերեսների, այդ թվում առարկայական ապակիների (իմերսիոն յուղի մաքրում) ախտահանման համար,

ը. պացիենտի խնամքի պարագաների, խաղալիքների, որոնք ունեն ոչ ծակոտկեն, հարթ մակերես (պլաստիկ, ապակի, մետաղ և այլն) ախտահանման համար,

թ. շտապօգնության մեքենաներում և սանիտարական տրանսպորտի սարքավորումների և մակերեսների ախտահանման համար,

ժ. ֆիզիոթերապևտիկ սարքավորումների ախտահանման համար,

ի. կարդիոէլեկտրոդների (սեղմակ, ծայրակալ, կլիպս, կրծքային էլեկտրոդներ) ախտահանման համար,

լ. տարբեր նյութերից (մետաղյա, ապակե, պլաստմասե, ռետինե) բժշկական նշանակության արտադրատեսակների (բացառությամբ վիրաբուժական, ինչպես նաև խոռոչներ և խողովակներ ունեցող) ախտահանման համար, ներառյալ բժշկական տոնոմետրերը, ռենտգեն-կասետները, տոնոմետրի բազկակլը, ստեթոսկոպները, ֆոնենդոսկոպները և լուսաֆոնենդոսկոպները, ատամնաբուժական գործիքները (բացառությամբ պտտվող), ատամնաբուժական ծայրակալները,

խ. դիահերձարանում և ախտաբանանատոմիական ծառայության շենքում, դատաբժշկական փորձաքննության օբյեկտների ոչ մեծ մակերեսների, կոլումբարիումներում, թաղման գրասենյակներում և գրասենյակ-խանութներում, սգո արարողությունների սրահներում, այլ կազմակերպությունների շենքերում, որոնք ցուցաբերում են ծիսական ծառայություններ, ինչպես նաև ավտոդիակառքերի մշակման համար,

ծ. դեղագործական և կենսատեխնոլոգիական արդյունաբերության ոչ մեծ սենքերում և սարքավորումների և ոչ մանրէազերծ դեղերի արտադրության C և D դասի մաքրության սենքերում,

կ. սոլյարիների, հատուկ վարսավիրանոցների սպիրտի ազդեցության նկատմամբ կայուն մակերեսների, մատնահարդարման և ոտնահարդարման գործիքների և սարքերի ծայրակալների ախտահանման համար, որոնք ենթակա չեն մանրէազերծման՝ վարսավիրանոցներում, գեղեցկության սրահներում, կոսմետոլոգիական սրահներում և սպասարկման ոլորտի այլ կազմակերպություններում, որոնք ցուցաբերում են վարսավիրական և կոսմետոլոգիական ծառայություններ,

հ. ռետինե և պոլիպրոպիլենային գորգերի, մոմլաթե տակդիրների ախտահանման համար,

ձ. կոշիկների ներքին մակերեսների (ռետինե և պլաստիկից) ախտահանման համար՝ սնկային հիվանդությունների կանխարգելման և տհաճ հոտի վերացման նպատակով,

ղ. մոնիտորների (բացառությամբ հեղուկ-բյուրեղային էկրանների), համակարգիչների համալրող սարքերի (ստեղնաշար, միկրոֆոն, տպիչ և այլն), հեռախոսների (մոբիլ հեռախոս, պատճենահանման սարք և այլ օրգտեխնիկա) ախտահանման համար,

ճ. թղթադրամների և մետաղադրամների հաշվիչների, արտարժույթի և ակցիզային դրոշմանիշների դետեկտորների, փաստաթղթերի ոչնչացման սարքերի, պահոցային պահարանների և դարակաշարերի ախտահանման համար,

մ. օդորակման և օդափոխության համակարգի (կենցաղային օդորակիչներ, սպլիտ համակարգ, մուլտիզոնալ սպլիտ-համակարգ, տանիքի օդորակիչներ, օդատարներ, օդափոխության ֆիլտրեր և այլն) ախտահանման համար,

յ. բնակչության կողմից կենցաղում օգտագործման համար՝ սենքերում ոչ մեծ մակերեսով մակերևույթների, ինչպես նաև դժվարհասանելի մակերեսների, կենցաղային իրերի մաքրման և ախտահանման նպատակով (մեծահասակներ և 10 տարեկանից բարձր երեխաներ),

ն. մեծահասակների և 10 տարեկանից բարձր երեխաների ձեռքերի հիգիենիկ մշակման համար:

## 2. ՄԻՋՈՑԻ ԿԻՐԱՌՈՒՄ

10. Ձեռքերի հիգիենիկ մշակում. Ձեռքերի չոր դաստակների վրա (առանց ջրով և օճառով նախնական լվացման) լցնում են 3 մլ միջոց և ներմերսում մաշկին, մինչև չորանա, սակայն առնվազն 30 վայրկյան, ուշադրություն դարձնելով միջմատնային հատվածների, մատների ծայրերի և եղունգը շրջապատող մաշկի վրա: Տուբերկուլոզի և վիրուսային վարակների կանխարգելման համար ձեռքերի ափերի մեջ լցնում են երկու անգամ, յուրաքանչյուր անգամ օգտագործելով առնվազն 3 մլ միջոց, մշակման ընդհանուր ժամանակը՝ առնվազն 2 րոպե:

11. Վիրաբույժների և վիրահատությանը մասնակցող այլ անձանց ձեռքերի մշակում. միջոցի կիրառումից առաջ ձեռքերի դաստակներն ու նախաբազուկները նախապես 2 րոպե մանրակրկիտ լվանում են տաք հոսող ջրով և օճառով, որից հետո դրանք չորացնում են մանրէազերծ թանզիվե անձեռոցիկով: Այնուհետև միջոցը բաժնեմասերով (2-3 մլ) լցնում են չոր ձեռքերի վրա երկու անգամ, մշակումն իրականացնում են՝ ձեռքերի մաշկը պահելով խոնավ վիճակում, յուրաքանչյուր բաժնեմասը ներմերսելով երկու ձեռքերի դաստակների և նախաբազուկների մաշկի մեջ 2,5 րոպե, մինչև ամբողջապես չորանա: Մշակման ընդհանուր ժամանակը 5 րոպե է: Մանրէազերծ ձեռնոցը հագնում են չոր ձեռքերին՝ միջոցի ամբողջությամբ չորանալուց հետո: Միջոցը դրսևորում է երկարաձգված հակամանրէային (մնացորդային) ազդեցություն 3 ժամ տևողությամբ:

12. Վիրահատական դաշտի և դոնորների արմնկային ծալքի մշակում, այդ թվում կաթետերի տեղադրումից առաջ. մաշկը երկու անգամ շփում են միջոցով առատ թրջված առանձին մանրէազերծ թանզիվե խծուծներով: Մշակումից հետո պահաժամը՝ 2 րոպե:

13. Ներարկային դաշտի, այդ թվում պատվաստման տեղի մշակում.

1) Մաշկը շփում են (մեկ ուղղությամբ) միջոցով առատ թրջված մանրէազերծ բամբակե խծուծով: Պահաժամը մշակումն ավարտելուց հետո՝ առնվազն 20 վայրկյան,

2) Ներարկման տեղում ոռոգման եղանակով մաշկի մշակման ժամանակ միջոցը ցողացրում են, մինչև ամբողջապես թրջվի, հետագա պահաժամով՝ մշակումից հետո առնվազն 20 վայրկյան (մինչև միջոցն ամբողջապես չորանա):

14. Եռակցված ապակյա ամպուլների (սրվակների) մշակում ներարկումից առաջ. եռակցված ամպուլի վերին երրորդ մասը շփում են միջոցով առատ թրջված մանրէազերծ խոնավ խծուծով: Մշակումից հետո պահաժամը՝ առնվազն 20 վայրկյան:

15. Ոտնաթաթերի կանխարգելիչ մշակում (լողավազան, շոգեբաղնիք, ցնցուղարան և այլ տեղեր հաճախելուց հետո). մանրակրկիտ շփում են յուրաքանչյուր ոտնաթաթը միջոցով առատ թրջված առանձին բամբակե խծուծով: Յուրաքանչյուր ոտնաթաթի մշակման ժամանակը տարբեր խծուծներով՝ առնվազն 1 րոպե: Սնկային հիվանդությունների կանխարգելման համար ախտահանիչ պահաժամը՝ 3 րոպե:

16. Լատեքսից, նեոպրենից, նիտրիլից (և այլ նյութերից) ձեռնոցների և արտադրատեսակների մշակում. ձեռնոցի մակերեսի ախտահանման համար ձեռնոցով ձեռքի սեղմած ափի մեջ լցնում են 2,5 մլ միջոց: Այնուհետև միջոցի այդ մասնաբաժնով 15 վայրկյան շփում են երկու ձեռքերի ձեռնոցների մակերեսը, կատարելով շարժումներ, որոնք կատարում են հականեխիչով ձեռքերի մշակման ժամանակ կամ մշակում են միջոցով առատ թրջված մանրէազերծ բամբակյա կամ թանզիվե խծուծով: Մշակման ընդհանուր ժամանակը՝ 30 վայրկյան: Ախտահանիչ պահաժամը՝ առնվազն մեկ րոպե մանրէային (բացառությամբ տուբերկուլոզի) վարակների ժամանակ, և առնվազն 5 րոպե՝ մանրէային (ներառյալ տոուբերկուլոզը), վիրուսային և սնկային վարակների ժամանակ:

17. Արտադրություններով, արյունով (և այլն) ձեռնոցների աղտոտման ժամանակ ձեռքերի աղտոտումից խուսափելու համար դրանք հանելու ժամանակ, սկզբում հեռացնում են աղտոտվածությունը միջոցի լուծույթով ներծծված բամբակե խծուծով կամ անձեռոցիկով, իսկ այնուհետև իրականացնում ձեռնոցի մշակում վերևում ներկայացված ձևով: Միջոցով մշակումից հետո ձեռնոցը հանում են ձեռքերից և ուղարկում օգտահանման, այնուհետև իրականացնում ձեռքերի հիգիենիկ մշակում միջոցով:

18. Սենքերում ոչ մեծ մակերեսով կոշտ մակերևույթների և կահավորանքի պարագաների ախտահանումը իրականացվում է շփման կամ ոռոգման եղանակով: Միջոցի ծախսի նորման շփման ժամանակ 50 մլ/մ$^2$ է: Մշակումն իրականացվում է մեկ անգամ կամ երկու անգամ: Մշակման համար առավելագույն թույլատրելի մակերեսը պետք է կազմի սենքի ընդհանուր մակերեսի 1/10-ից ոչ ավելի (օրինակ 10 մ$^2$ սենքում ախտահանվող մակերեսը 1 մ$^2$-ից ավել չպետք է լինի): Մակերեսները, կահավորանքի պարագաները, սանիտարա-տեխնիկական սարքավորումները հավասարաչափ ոռոգում են միջոցով, մինչև ամբողջովին թրջվելը կամ շփում են միջոցով առատ թրջված անձեռոցիկով՝ սույն հրահանգի աղյուսակ 1-ում ներկայացված ռեժիմներին համապատասխան:

19. Ախտահանման ենթակա մակերեսները միջոցով թրջվում են ամբողջությամբ և հավասարաչափ ամբողջ հարթությամբ: Միջոցն արագ չորանում է, չթողնելով հետքեր մակերեսների վրա: Մակերեսներն օգտագործվում են միջոցի ամբողջությամբ չորանալուց հետո: Անհրաժեշտության դեպքում մակերեսները կարելի է շփել մանրէազերծ թանզիվե անձեռոցիկներով ախտահանման ժամանակը ավարտվելուց հետո, չսպասելով, որ դրանք չորանան:

20. Միջոցը չի կիրառվում ցածրորակ կամ սպիրտալույծ ներկերով և լաքերով պատված, օրգանական (ակրիլային) ապակուց և սպիրտի ազդեցության նկատմամբ անկայուն այլ մակերեսների մշակման համար: Օգտագործելուց առաջ ստուգում են միջոցի ազդեցությունը մակերեսի ոչ մեծ, քիչ տեսանելի տեղամասում:

21. Մշակվող մակերեսի վրա կենսաբանական աղտոտվածության (օրգանական և այլ) առկայության ժամանակ միջոցով առատ թրջված մեկ անձեռոցիկով հեռացնում են աղտոտվածությունը, իսկ մեկ այլ անձեռոցիկով իրականացնում կրկնակի մշակում սույն հրահանգի աղյուսակ 1-ում ներկայացված ռեժիմներին համապատասխան: Անձեռոցիկներն օգտահանում են բժշկական թափոնների տարայում՝ հետագա օգտահանման համար:

22. Բժշկական սարքերի և սարքավորումների, ֆիզիոթերապևտիկ սարքավորումների, ախտորոշիչ սարքավորումների, որոնք նախատեսված չեն ինվազիվ միջամտության համար և անմիջականորեն չեն շփվում պացիենտի լորձաթաղանթի հետ (ՈՒԶՀ տվիչներ, մամոգրաֆ, կարդիոէլեկտրոդներ և այլն), ֆոնենդոսկոպների և ստեթոսկոպների արտաքին մակերեսների ախտահանումն իրականացնում են միջոցով առատ թրջված անձեռոցիկով շփման եղանակով: Ախտահանման ռեժիմները ներկայացված են սույն հրահանգի աղյուսակ 1-ում: Կենսաբանական արտադրությունների առկայության ժամանակ մշակումն իրականացվում է երկու փուլով՝ սույն հրահանգի 21-րդ կետին համապատասխան:

23. Ոչ ծակոտկեն, հարթ նյութերից (տակդիր մոմլաթներ, ջեռակներ և այլն) հիվանդի խնամքի պարագաները, խաղալիքները և այլ օբյեկտներ, որոնք աղտոտված չեն կենսաբանական արտադրություններով, շփում են միջոցով առատ թրջված անձեռոցիկով, սույն հրահանգի աղյուսակ 1-ում ներկայացված ռեժիմներին համապատասխան: Կենսաբանական արտադրությունների առկայության ժամանակ մշակումն իրականացվում է երկու փուլով՝ սույն հրահանգի 21-րդ կետին համապատասխան:

24. Սպիրտ պարունակող միջոցներով մշակման՝ արտադրողի թույլտվությունն ունեցող կուվեզների մակերեսների ախտահանումն իրականացնում են առանձին, լավ օդափոխվող սենքում, երեխաների բացակայության պայմաններում: Միջոցը սփրեյի տեսքով մշակվող մակերեսի վրա են ցողում ձեռքի ցողացրիչով 30 սմ հեռավորությունից, մինչև ամբողջությամբ թրջվի կամ միջոցի լուծույթով ներծծված անձեռոցիկներով, և թողնում են ախտահանման պահաժամով: Ախտահանման պահաժամից հետո կուվեզի մակերեսները երկու անգամ շփում են մանրէազերծ ջրով առատ թրջված մանրէազերծ գործվածքային անձեռոցիկով (տակաշորով): Յուրաքանչյուր լվացումից հետո կուվեզի մակերեսները մանրէազերծ գործվածքային անձեռոցիկներով (տակաշորով) սրբելով չորացնում են: Մշակումից հետո կուվեզները 10 րոպե օդափոխում են:

25. Բնական և արհեստական կաշվից, պլաստիկե և ռետինե կոշիկների ներքին մակերեսի ախտահանումը սնկային հիվանդությունների կանխարգելման նպատակով իրականացնում են միջոցի լուծույթով ներծծված երկու անձեռոցիկով շփելով (կոշիկի մեկ զույգի համար), կամ ձեռքի ցողացրիչով առնվազն 30 սմ հեռավորությունից հավասարաչափ ռոռգելով միջոցով, մինչև մակերեսն ամբողջությամբ թրջվի, 2 րոպե ախտահանման պահաժամով: Ախտահանումից հետո միջոցի լվացում չի պահանջվում: Օգտագործելուց առաջ կոշիկը չորացվում է:

26. Սենքերում մակերեսների, կոշտ գույքի, սարքերի և սարքավորումների արտաքին մակերեսների ախտահանումը ժանտախտի, խոլերայի, տուլարեմիայի օջախներում իրականացնում են սույն հրահանգի աղյուսակ 1-ում ներկայացված հատուկ վտանգավոր վարակների համար առաջարկվող ռեժիմներով, սույն հրահանգի 16-21-րդ կետերին համապատասխան:

27. Վարսավիրանոցներում, բաղնիքներում, շոգեբաղնիքներում, լողավազաններում, մարզահամալիրներում, կոսմետոլոգիական սրահներում ախտահանումն իրականացնում են դերմատոֆիտիաների ժամանակ առաջարկվող ռեժիմներով՝ սույն հրահանգի աղյուսակ 1-ին համապատասխան:

28. Շտապօգնության և քաղպաշտպանության և արտակարգ իրավիճակների ծառայությունների ավտոտրանսպորտի, սանիտարական տրանսպորտի օբյեկտների ախտահանումն իրականացնում են ռոռգման եղանակով կամ միջոցով առատ թրջված անձեռոցիկներով շփելով: Մակերեսները պատրաստ են օգտագործման անմիջապես միջոցի չորանալուց հետո: Ախտահանումն իրականացնում են համապատասխան

վարակների ժամանակ, իսկ անհայտ ծագման վարակների ժամանակ՝ վիրուսային վարակների ժամանակ առաջարկվող ռեժիմներով՝ սույն հրահանգի աղյուսակ 1-ին համապատասխան: Կանխարգելիչ ախտահանումն իրականացվում է մանրէային (բացառությամբ տուբերկուլոզի) վարակների ժամանակ առաջարկվող ռեժիմներով:

29. Մակերեսների և օբյեկտների ախտահանումը դիահերձարանում և ախտաբանանատոմիական ծառայության շենքերում, դատա-բժշկական փորձաքննության հիմնարկներում, կոլումբարիումներում, դիակիզարաններում, թաղման գրասենյակներում, ծիսական և թաղման ծառայություն մատուցող այլ կազմակերպությունների շենքերում ու շինություններում իրականացնում են միջոցով՝ սույն հրահանգի աղյուսակ 1-ում ներկայացված ռեժիմներին համապատասխան: Ավտոդիակառքերը մշակում են սանիտարական տրանսպորտի մշակման ռեժիմներով, սույն հրահանգի 28-րդ կետին համապատասխան:

30. Օդորակիչների և օդափոխության համակարգերի կառուցվածքային տարրերի մակերեսները, հովհարների և սենքերի օդափոխանակության համակարգերի կառուցվածքային տարրերի մակերեսները ռռոգում են միջոցով՝ հաջորդելով շփումով կամ շփում են միջոցով առատ թրջված անձեռոցիկով (ծախսի նորման նշված է սույն հրահանգի 18-րդ կետում)՝ սույն հրահանգի աղյուսակ 1-ին համապատասխան:

Աղյուսակ 1.

Տարբեր օբյեկտների ախտահանման ռեժիմներ միջոցով

| Ախտահանման օբյեկտ | Վարակի տեսակ | Ախտահանման ժամանակ, րոպե | Ախտահանման եղանակ |
|---|---|---|---|
| Սենքերի ոչ մեծ մակերեսով մակերևույթներ, կահավորանքի պարագաներ, կոշտ գույք, սանիտարական տրանսպորտի օբյեկտներ և այլն | Մանրէային (բացառությամբ տուբերկուլոզի) և սնկային (կանդիդոզներ) | 1 | Շփում կամ ռռոգում |
| | Դերմատոֆիտիաներ | 3 | Շփում կամ ռռոգում |
| | Հատուկ վտանգավոր վարակներ (ժանտախտ, խոլերա, տուլարեմիա) | 3 | Լուծույթը լցնել վրան |
| | Մանրէային (ներառյալ տուբերկուլոզը), վիրուսային և սնկային (կանդիդոզներ, դերմատոֆիտիաներ) | 5 | Շփում կամ ռռոգում |
| Բժշկական սարքերի և սարքավորումների մակերեսներ (ՈՒՁՀ տվիչներ, մամոգրաֆ, ֆիզիոթերապևտիկ սարքավորում, ֆոնենդոսկոպ, ստեթոսկոպ և այլն), ատամնաբուժական ծայրակալներ | Մանրէային (բացառությամբ տուբերկուլոզի) և սնկային (կանդիդոզներ) | 1 | Շփում կամ ռռոգում |
| | Դերմատոֆիտիաներ | 3 | Շփում կամ ռռոգում |
| | Հատուկ վտանգավոր վարակներ (ժանտախտ, խոլերա, տուլարեմիա) | 3 | Լուծույթը լցնել վրան |
| | Մանրէային (ներառյալ տուբերկուլոզը), վիրուսային և սնկային (կանդիդոզներ, դերմատոֆիտիաներ) | 5 | Շփում կամ ռռոգում |
| Ոչ ծակոտկեն նյութերից հիվանդի խնամքի պարագաներ (ջերմաչափ, տականոթ, | Մանրէային (բացառությամբ տուբերկուլոզի) և սնկային (կանդիդոզներ) | 1 | Շփում կամ ռռոգում |

| | | | |
|---|---|---|---|
| տակդիր մոմլաթ, ջեռակ և այլն), խաղալիքներ | Դերմատոֆիտիաներ | 3 | Շփում կամ ոռոգում |
| | Հատուկ վտանգավոր վարակներ (ժանտախտ, խոլերա, տուլարեմիա) | 3 | Լուծույթը լցնել վրան |
| | Մանրէային (ներառյալ տուբերկուլոզը), վիրուսային և սնկային (կանդիդոզներ, դերմատոֆիտիաներ) | 5 | Շփում կամ ոռոգում |
| Օդորակիչների և օդափոխության համակարգերի կառուցվածքային տարրերի մակերեսներ, հովհարների և սենքերի օդափոխանակության համակարգերի կառուցվածքային տարրերի մակերեսներ | Լեգիոնելոզ | 3 | Շփում կամ ոռոգում |

## 3. ՆԱԽԱԶԳՈՒՇԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

31. Քրոնիկ ալերգիկ ռեակցիաներով անձանց և հղի կանանց չի թույլատրվում աշխատել միջոցով:

32. Միջոցը հեշտ բոցավառվում է: Թույլ չտալ շփում բաց կրակի և միացված տաքացուցիչ սարքերի հետ: Չծխել:

33. Միջոցը պահում են դեղերից և սննդամթերքից առանձին, երեխաների համար անհասանելի տեղում:

34. Միջոցն օգտագործվում է միայն ըստ նշանակության, անմիջապես բնօրինակ փաթեթից:

35. Չօգտագործել վերքերի և լորձաթաղանթների մշակման համար:

36. Խուսափել միջոցն աչքերի մեջ լցվելուց:

37. Միջոցը չօգտագործել պիտանելիության ժամկետի ավարտից, ինչպես նաև ոչ ճիշտ պահելու դեպքում:

## 4. ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

38. Աչքերի մեջ միջոցի պատահական լցվելու ժամանակ անմիջապես դրանք լվանալ հոսող ջրով և կաթեցնել 1-2 կաթիլ նատրիումի սուլֆացիլի 20-30%-ոց լուծույթ: Անհրաժեշտության դեպքում դիմել ակնաբույժի:

39. Մաշկի վրա գրգռվածության, ցանի առաջացման ժամանակ դադարեցնել միջոցի կիրառումը, ձեռքերը լվանալ օճառով և ջրով:

40. Ստամոքսի մեջ միջոցի պատահական հայտնվելու ժամանակ բերանը ողողել, խմել մի քանի բաժակ ջուր և առաջացնել փսխում: Այնուհետև խմել ադսորբենտ: Անհրաժեշտության դեպքում դիմել բժշկի:

41. Շնչառական օրգանների գրգռվածության առաջացման ժամանակ դադարեցնել միջոցով աշխատանքը, տուժածին դուրս բերել մաքուր օդի կամ լավ օդափոխվող սենք, իսկ այդ սենքն օդափոխել: Խմացնել տաք ըմպելիք: Բերանը և քիթըմպանը ողողել ջրով: Անհրաժեշտության դեպքում դիմել բժշկի:

## 5. ՓԱԹԵԹԱՎՈՐՈՒՄ, ՏԵՂԱՓՈԽՈՒՄ, ՊԱՀՈՒՄ

42. Միջոցը սպառողական տարայով փաթեթավորվում է գոֆրոստվարաթղթե արկղերի մեջ կամ տեղափոխվում է պոլիմերային կուբերով:

43. Միջոցը տեղափոխվում է ցամաքային տրանսպորտի բոլոր տեսակներով՝ փակ տրանսպորտային միջոցներով, այդ տրանսպորտային միջոցների համար գործող և արտադրանքի ու տարային անվնասությունը երաշխավորող բեռների տեղափոխման կանոններին համապատասխան: Տեղափոխման ջերմաստիճանը պլյուս 5°C-ից մինչև պլյուս 30°C ջերմաստիճանն է: Թույլատրվում է 3 (երեք) ամսվա ընթացքում տեղափոխել, պահել և օգտագործել միջոցը պլյուս 5°C-ից մինչև պլյուս 30°C ջերմաստիճանում:

44. Միջոցը պահվում է արտադրողի հերմետիկ փակ փաթեթավորմամբ, չոր տեղում, պլյուս 5°C-ից մինչև պլյուս 30°C ջերմաստիճանում, տաքացուցիչ սարքերից, բաց կրակից և արևի ուղիղ ճառագայթներից հեռու:

45. Վթարային իրավիճակում միջոցի մեծ քանակության պատահական արտահոսքի ժամանակ վրան լցնում են ավազ կամ հող (չօգտագործել դյուրավառ նյութեր, օրինակ թեփ, տաշեղ), հավաքում են կափարիչով տարայի մեջ հետագա օգտահանման համար: Մնացորդը լվանալ մեծ քանակությամբ ջրով:

46. Շրջակա միջավայրի պաշտպանության միջոցառումներ. չնոսրացված վիճակով չլցնել ստորգետնյա, մակերեսային ջրերի, կեղտաջրերի, կոյուղու մեջ:

47. Միջոցի պիտանելիության ժամկետը 5 տարի է արտադրման օրվանից, արտադրողի սերտ փակ փաթեթավորմամբ պահելու պայմաններում: